



«Դոնի Նախիջևան» ամսաթերթի խմբագրական կազմը շնորհավորում է աշխարհասփյուռ հայության, Հայաստանի և Արցախի մեր հայրենակիցների Ամանորն ու Սուրբ Ծնունդը: Թող 2018 թվականը խաղաղության, սիրո, երջանկության, բարեկեցության, առաջընթացի ու զարգացման տարի լինի բոլորի համար:

ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՆՇԵԼՈՒ ՄԵՐ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՁԵՎԵՐԸ. ԼՈՒՍԻԿ ԱԳՈՒԼԵՑԻ

Շուտով Ամանոր է, և գալիք տոնին ընդառաջ տեղին է հիշել հայկական Ամանորի ծեսի և մեզ բնորոշ հին ավանդույթների մասին: Թեմայի շուրջ գրուցեցինք նկարչուհի, ազգագրագետ Լուսինե Ագուլեցու հետ: Նա նախ բացատրեց, թե ինչ է նշանակում «Ամանոր»,

Այս երկուսի միասնությունից ստացվել է բերքատվության, հյուրասիրության և, ընտանիքի գաղափարը: Նրանք տիեզերական զույգեր են, ուստի Ամանորը համարվում է ընտանեկան տոն: Նրա խոսքով՝ 1758 թվականից, ըստ Սիմեոն Երևանցու ընդունած Կոնդակի, տարվա

13-ը: Ինչ վերաբերում է ծիսական ծառին, ապա, նրա փոխանցմամբ, Արևմտյան Հայաստանում նախկինում հայերը գաթա են թխել, գաթայի վրա ձիթ են դրել և տարբեր տեսակի չրեղեն, ընկույզ, պղտուկ, նուշ, տարել եկեղեցի, օրհնել են, որից հետո իբրև ծես ընտանիքի անդամներից ամեն մեկը իրենց մազից կապել են ճյուղի վրա՝ որպես երկարակեցության խորհրդանիշ: Այնուհետև այդ ճյուղը վառել են, վրայի չրեղենն ու ընկույզը օգտագործել: Նախկինում Արևմտյան Հայաստանում զարդարել են նույնիսկ սովորական ծառեր, օրհնակ՝ բալենի, իսկ խաղալիքները պատրաստվել են հիմնականում երեխաների ձեռքով: Յուրահատուկ է եղել նաև հին հայկական ամանորյա սեղանը, որի վրա հյուրերին մինչև հունվարի 6-ը մատուցվել է զուտ բուսական սնունդ: Մեղանի հիմնական զարդը եղել է լոբին: Հյուրերին մատուցվել է նաև ընդեղեն, ձավարով ճաշեր, պասուց տոլմա, կանաչիներ, որոնք պատրաստվել են բուսական ձեռքով: Լ. Ագուլեցին պատմեց, որ նախկինում ամանորյա տոներին հետաքրքիր ավանդույթներ են ունեցել, որոնցից մեկը գոտեկախն է: Գոտեկախի էությունը հետևյալն է՝ երեխաները բարձրանում էին խրճիթների տանիքների վրա, իրենց գոտեկախում էին որևէ փաթեթ կամ գուլպաներ և կախում ծրխնեղյակից: Տան բնակիչները պետք է դրանք լցնեին իրենց տոնական սեղաններից վերցրած ուտելիքներով և քաղցրավենիքներով: Այդպիսով՝ օջախն օրհնվում էր հաջող տարվա համար: Մեկ այլ ավանդույթի համաձայն Սուրբ ծնունդի օրը երեխաները երդիկից դուրս են իջեցրել և մոմ են վառել, այդպիսով նրանք ընտանիքին լույս են բերել, հայտնել, որ Քրիստոսը ծնվեց և լույս բերեց աշխարհին: Հնում մենք ունեցել ենք նաև, այսպես կոչված, աներևույթ



կերպարներ: Օրհնակ՝ ասում են, թե Նոր տարում յուրաքանչյուրի տանիքում նրստած է եղել մի կերպար, որին չէր կարելի նեղացնել՝ ընտանիքում կոփվներ չպետք է լինեին, մարդիկ բարոյական կյանքով պետք է ապրեին, այլապես այդ աներևույթ կերպարը նրանց կարող էր պատժել: Լ. Ագուլեցու խոսքով՝ 20-ական թթ. հետո մենք մեր ավանդույթներն աստիճանաբար մոռացանք: «Այսօր այս ամենն ո՛վ պետք է սովորեցնի երիտասարդ սերնդին: Մենք հրաշալի գիր ու գրականություն ունենք այս բոլոր ծեսերի, ավանդույթների մասին, բայց չենք ուզում սովորել: Այսօր մենք Նոր տարին նշում ենք՝ օտարներին հետևելով: Օրհնակ՝ Ամանորը պետք է ազատենք շքեղ փայլերից, մենք չենք ունեցել այդ փայլերը, մենք ունենք Նոր տարին նշելու մեր առանձնահատուկ ձևերը»:

Սոնա ԲԱԲԱՋԱՆՅԱՆ



որտեղից է գալիս այս անունը: «Ըստ մեր դիցաբանության, ըստ Ազաթանգեղոսի՝ Ամանորը եղել է կին, որին սիրահարվել է Վանատուրը: Նա՝ որպես սիրո առաջին խոստովանության նշան, կարմիր խնձոր է նվիրել Ամանորին, այսինքն՝ տիեզերքի պտուղը (ի դեպ, տոնական ծառի վրա կարելի է նաև կարմիր խնձորներ կախել):

սկիզբ համարվել է հունվարի 6-ը՝ Սուրբ ծնունդյան օրը: Մինչ տարվա սկիզբը մարդիկ պաս են պահել, ապա տոնել են Նոր տարին: Այնուհետև 1923 թվականին մեր եկեղեցին ընդունել է, որ Նոր տարին պետք է նշվի հունվարի 1-ին, իսկ հունվարի 6-ին նշվելու է Սուրբ ծնունդը: Այժմ Նոր տարին նշում ենք 13 օր՝ հունվարի 1-ից մինչև

ՀԱՅԵՐՆ ՌՈՒՄԱՍՏԱՆՈՒՄ

ՈՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԶՊԱԿԱՍԻ ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այդ օրը համերգային դահլիճում ուշադրությունս գրավեց հայի գեղեցիկ դիմագծերով, խոշոր ու սև աչքերով մի երիտասարդ: Նա մեծ խնամքով ու հոգատարությամբ ուղեկցում էր իր ծեր ծնողներին, գրուցում նրանց հետ, պատմում, բացատրում, ապա նույն քրնք-շանքով դիմում կնոջն ու երկու բալիկներին: Մեր առամնաբույժն է, Ահարոնը, - ասաց կողքիս նստած հայ կինը Անահիտը, - ոսկի ձեռքեր ունի, բոլոր հայերը նրա մոտ են գալիս: Ահարոնի հետ ծանոթացանք քիչ ուշ: Ահարոնը մշտեցի պապերի Մարտունիում ծնված ծնողների գավակ է, որն ապրել և կրթություն է ստացել Երևանում՝ Մանուկ և Անահիտ Ազեյանների բազմազավակ ընտանիքում: Նա ընտանիքի միակ արու զավակն էր, չորս քույրերի շատ սպասված եղբայրը: Դպրոց, ուսումնարան, ինստիտուտ: Շուտով բազմանդամ ընտանիքի հոգներն իրենց զգացնել սովեցին և ատամնաբույժի կրթություն ստացած երիտասարդը պետք է որոշում կայացներ դժվար ու քրոշում գնալ Ռուսաստան աշխատելու: Առանց ընտանիքի շատ դժվար էր: Շուտով իր մոտ



- Վստահ էի միայն իմ կամքի և աշխատասիրության վրա, փորձն ու հմտությունը ձեռք էի բերում ամեն օր, լեզուն սովորում էի շփումների արդյունքում: Կամաց-կամաց ամեն ինչ ընկավ իր հունի մեջ: Իմ առաջին այցելուներն իմ հայրենակիցներն էին: Շուտով բացեցի իմ կլինիկան և շուրջս համախմբեցի լավ մասնագետների: - Իսկ ո՞րն է ձեր կյանքի նշանաբանը: - Լինել լավ մարդ, լավ մասնագետ և ծառայել օտարության մեջ գտնվող իմ հայրենակիցներին և ոչ միայն նրանց: Հաճելի է գիտակցել, որ դու պետք է մարդկանց, ինչ ազգի էլ նրանք պատկանեն: - Ի՞նչ սիրով արտահայտվեցիք ձեր հայրենակիցների մասին, իսկ ո՞վ է հայրը և ինչու է ներ մենք այստեղ դրսում: - Հայի բնութագիրը շատ պարզ է ինձ համար: Իմ կարծիքով, նա աշխարհին պակասող աղն է, խավարը չհանդուրժող լույսի շողը, մարդկությանը չհերիքող բարությունն է, ազատության ու ժառանգությանը հակադրված իր լայն բացած սիրտն է: Գո ցե սա է պատճառը, որ մեր Տերը հայերին որպես առաջին քրիստոնյա ժողովուրդ ցրել է աշխարհով մեկ, որ համ ու հոտ, լույս ու բարիք լինի ամենուր: Մի խոսքով, հայն առաջիններից է ընդունել Աստծուն: Երբ ձանաչում են նրան, էլ ոչ մի բանից չես վախենում: Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

